ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1315[2]-07.04.2026-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեմտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ բաժինը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7.16-րդ կետով.

«7.16	Էներգիայի պահեստավորման համար, այդ թվում՝	
7.16.1	Էլեկտրաէներգետիկական համակարգում նոր պահեստավորող հզորությունների կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
7.16.2	էներգիայի պահեստավորման ժամանակահատվածի համար, այդ թվում՝	
7.16.2.1	մինչեւ 15 ՄՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայանների համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
7.16.2.2	15-50 ՄՎտ (ներառյալ) դրվածքային հզորության կայանների համար՝ տարեկան	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
7.16.2.3	50 ՄՎտ-ից բարձր դրվածքային հզորության կայանների համար՝ տարեկան	բազային տուրքի 5000-ապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: